Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-228[1]-19.07.2019,06.09.2019-ՏՏԳԲ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ *ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ* ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի 63.6-րդ հոդվածի՝

1) վերնագրում և 1-ին մասում «Հանգստի» բառը փոխարինել «Ռեկրեացիայի» բառով,
2) 1-ին մասում «հիսնապատիկ» բառը փոխարինել «երկուհարյուրապատիկ» բառով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կ-228[1]-19.07.2019-ՏՏԳԲ-011/0

ՏԵՂԵԿԱՆՔ
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ս Գ Ի Ր Ք

Հոդված 63[6]. **~~Հանգստի~~ Ռեկրեացիայի և սպորտի համար ջրային ռեսուրսներից օգտվելու կանոնները (պայմանները) խախտելը**

~~Հանգստի~~ **Ռեկրեացիայի** և սպորտի համար ջրային ռեսուրսներից օգտվելու կանոնները (պայմանները) խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով, իսկ պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ~~հիսնապատիկի~~ երկուհարյուրապատիկի չափով:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կ-228-19.07.2019,06.09.2019-ՏՏԳԲ-011/1 «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», Կ-228[1]-19.07.2019,06.09.2019-ՏՏԳԲ-011/1 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի վերաբերյալ ներկայացված առաջարկներ

ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
ՀՀ կառավարություն	Վերնագրում	**1.** «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերնագիրը լրացնել «***և փոփոխություն***» բառերը	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
ՀՀ կառավարություն	Վերնագրում	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերնագրում «լրացում» բառը փոխարինել «***փոփոխություն***» բառով	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է

ՀՀ ԱԺ «Բարգավաճ Հայաստան» խմբակցության առաջարկը	Հոդված 1.-ում	1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (Կ-228[1]-19.07.2019,06.09.2019-ՏՏԳԲ-011/1) Հոդված 1-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «**Հոդված 1.** Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի 63.6-րդ հոդվածի վերնագրում և տեքստում «Հանգստի» բառը փոխարինել «Ռեկրեացիայի» բառով, իսկ «հիսնապատիկ» բառը փոխարինել «երկուհարյուրապատիկ» բառով:»	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն՝ նախագծի 1-ին հոդվածը լրացվել է նոր 2-րդ կետով:	Ընդունվել է